

Անուն----- Թուական-----

«Թայիևին Յաշիւր»

Բառագիտութիւն

Նախադասութիւնները ամբողջագո՛ւր հետեւեալ բառերով:

Բժիշկ – պարտք – գումար – կ'աճապարեմ – հաշուեցուցակ – պատուաստ – քննութեան - ոչինչ – համար – կերակրել

1-ճաշը սիրեցի ու ախորժակով կերայ. ամանիս մէջ -----մնաց:

2-Գնումներս ըրի, ծախողը -----ը տուաւ, որ վճարեմ:

3-Երեկ ճաշիս դրամը կորսնցուցի, ուսուցիչես -----ի առի:

4-Դպրոցէն չուշանալու համար -----:

5-Մայրս -----ի տարաւ զիս, երբ հիւանդացայ:

6-Եօթի եւ երեքի -----ը կ'ընէ տասը:

7-Բժիշկը փոքրիկներուն -----կու տայ, որ չհիւանդանան:

8-Մայրս ոչինչ կը գանձէ, մեր ընտանիքի սիրոյն կատարած բոլոր գործերուն-----:

9-Բժիշկս -----եւ դեղերու համար 50 տոլար գանձեց:

10-Ամէն օր մեր շունը -----ը իմ պարտականութիւնս է:

**Հասկացողութիւն**

**Շրջագծէ՛ ճիշդ պատասխանը:**

1-Թալինին հայրը ի՞նչ գործով կը զբաղէր:

Ա-հաշուապահ    Բ-խոհարար    Գ-բժիշկ

2-Թալինին հայրը ի՞նչ կը գրէր իր յաճախորդներուն:

Ա-նամակ    Բ-հաշուեցուցակ    Գ-նոտանաւոր

3-Թալինը, երբ մօրը ըսած գործերը ըրաւ հաշուեցուցակը դրաւ...

Ա-գրասեղանին վրայ    Բ-աթոռին վրայ    Գ-անկողինին վրայ

4-Յաջորդ օրը Թալինը, երբ 15 տուարը տեսաւ ի՞նչ զգաց:

Ա-ուրախութիւն    Բ-տխրութիւն    Գ-քաջութիւն

5-Թալինին մօրը գրած հաշուեցուցակին գումարը ի՞նչ էր:

Ա-100 տուար    Բ-ոչինչ    Գ-աւելորդ գործի ցանկ

**Պատասխանէ՛ հետեւեալ հարցումներուն:**

1-Թալինը ինչպէ՞ս սորված էր հաշուեցուցակ գրել:

-----  
-----

2-Թալինին եւ մամային պատրաստած հաշուեցուցակները ինչպէ՞ս կը տարբերէին իրարմէ:

-----  
-----

3-Կը կարծե՞ս, որ ծնողները դրամ պէտք է վճարեն պզտիկներուն, երբ անոնք տունին մէջ գործեր ընեն: Ինչո՞ւ:

-----  
-----  
-----

4-Գիծերուն վրայ գրէ՛ թիւերուն եւ նշաններուն անունները:

$$\begin{array}{cccccc} 5 & + & 6 & = & 11 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{cccccc} 7 & - & 4 & = & 3 \\ \hline \end{array}$$

Քերականութիւն

Ամբողջացո՛ւր սիւնակները.-

Եզակի

Յոգևակի

Մրջիւն

-----

Սեղան

-----

-----

տուներ

Թռչուն

-----

-----

հարցումներ

Գրիչ

-----

-----

պատմութիւններ

-----

տերեւներ

Նուէր

-----

-----

կենդանիներ